ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

" CHILDREN'S HOME – AFTER MARIE IZMIRLIAN " STATE NON COMMERCIAL ORGANIZATION OF THE MINISTRY OF LABOUR AND SOCIAL ISSUES OF REPUBLIC OF ARMENIA

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 2

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ին տնօրենի պարտականությունները ժամանակավոր կատարող

«Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին

23. 05.2024թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.02.2024թ-ին կնքվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-3-ՄԻ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանիհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագրով և գնման - վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ: Սակայն «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկերում չի իրականավել ապրանքի մատակարարում՝ խախտվելով պայմանագրով սահմանված վաճառողի պարտավորությունները, որի արդյունքում 14.05.2024թ-ին գնորդը միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը՝ այն համարելով լուծված 164613.8 (մեկ հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր տասներեք դրամ, ութսուն լումա) ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամաբ հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները 15.05.2024թ. «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ին ուղարկվել է համապատասխան ծանուցում և տրվել

15547 /տասնհինգ հազար հինգ հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 23320/ քսաներեք հազար երեք հարյուր քսան/ ՀՀ դրամը գումարները Շահառուի 900008000664 հաշվեհամարին փոխանցելու համար, սակայն սահմանված ժամկետում «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չի վճարվել պայմանագրի և որակավորման ապահովման ապահովումների գումարը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ:

ՈՐՈՇԵՑԻ

1. «Արմվիլ Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝ Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ